ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 235

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքը (Կապան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Կապան համայնքի Կապան բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքը (Կապան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը:*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
09-001-0550-0009 կադաստրային ծածկագրով 0.38192 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման, 09-001-0550-0011 կադաստրային ծածկագրով 0.07849 հա մակերեսով բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման, 09-001-0550-0012 կադաստրային ծածկագրով 0.083 հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ և 09-001-0550-0113 կադաստրային ծածկագրով 0.03158 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողեր	09-001-0550-0009 կադաստրային ծածկագրով 0.38192 հա մակերեսով, 09-001-0550-0011 կադաստրային ծածկագրով 0.07849 հա մակերեսով, 09-001-0550-0012 կադաստրային ծածկագրով 0.083 հա մակերեսով և 09-001-0550-0113 կադաստրային ծածկագրով 0.03158 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության տրանսպորտի հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:
2. Կապան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Կապան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,
3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի (Կապան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, « 5 » «օգոստոսի» 2025 թ.